յին արտադրանքի հետ և շատ արագ տեղի տվեց նրա առջև: Եվ վաղուց արդեն մոռացված է այն ժամանակը, երբ ամեն օջախ իր տանն ունենում էր անպատճառ դազգյահ և ինքն իր գերդաստանի անդամների համար գործում պինրակից[125] բամբակից կտավը՝ հալավի, փոխանի և այլ նպատակների համար, պյուրթից՝ շալը—չուխայի, շալվարի, կյոտու համար, ապրէշումից՝ կնկա կյոտի, չարսավ կամ չարղաթ: Արդեն XIX դ. վերջերում տնայնագործության այս ճյուղը ցուցաբերում էր իր մահացման նշանները: Նա աշխուժանում էր միայն այն ժամանակները, երբ կտրվում էր կապը գործարանների հետ և գործարանային ապրանքների սուր պակասություն էր լինում որևէ պատճառով, այսպես, օրինակ՝ համաշխարհային առաջին պատերազմի և քաղաքացիական կռիվների ժամանակ: Կամ երբ ապրանքների գները շատ էին բարձրանում, օրինակ՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ոստայնանկության երկու ճյուղերից—տափի կյործից և ճըլկավըրի՝ կյործից, ավելի կենսունակություն և համառություն է ցուցաբերում առաջինն իր պարզ տեխնիկայով և նախնական սարքավորումով և այնպիսի կենցաղային կարևոր իրերի արտադրությամբ, որոնք գործարանային արդյունաբերության առարկա դարձած չեն, սակայն չափազանց պահանջելի են տեղական պայմաններում:

Տափի կյործը պահել է հիմնականում շատ հին ժամանակներից ժառանգած տեխնիկան, որին պատահում ենք օրինակ դեռ հին Եգիպտոսում, որտեղ սակայն աշխատանքը կատարվում էր երկու մարդու մասնակցությամբ՝ մեկը ձգած թելերի շարքերը բարձրացնում իջեցնում էր, մյուսը նրանց միջով անց էր կացնում խաչաձևվող թելերն ու սեղմ իրար թխում՝ կպցնում, ամրացնում: Այդ նախնական եղանակի հետ համեմատած Զանգեզուրում տարածվածն անհամեմատ ավելի կատարելագործված էր՝ այստեղ մտել էր և ասպը և ասպը պահող էշի վօ(ը)ճդիկճէրը[126] էշի ոտները և աշխատում էր տափին՝ գետնին նստած մեկ մարդ—միշտ կին: Իր ձեռքի քօրի՝ թուրի օգնությամբ նա հմուտ շարժումներով բարձրացնում էր ճէճֆի մերթ զույգ, մերթ կենտ թելերի շարքը, անցկացնում աջից ձախ, ձախից աջ թելի կծիկն ու քօրավ թխում՝ իրար խմուր կպցնում:

Այսպես գործում էին տօլաղալթին, կնկա ճողը, ձիու և էշի փորի կապերը, չէչիմը, երբեմն և մարդու շալվարացուն: Էշի վօ(ը)ճդիկճէրը երբեմն փոխարինվում էին ծալովի եռոտանիով, որի երեք ձողերն իրար հետ գլխներով կապված են և հարկ եղած ժամանակ կարող են միասին հավաքվել և ծալվել: Այս եռոտանին կարելի էր հեշտ բարձել ձիու, ջորու կամ էշի վրա և տեղափոխել: Ադրբեջանական կանայք գերադասում էին այդ եռոտանիով աշխատել, մանավանդ սարում: Տափի կյործը քօրֆէրի՝ թուրքերի մեջ առանձնապես շատ տարածված էր և զարգացած:

Ճըլկավըրի կյործը պահանջում էր բավականին բարդ կազմվածք: Դազգյահը կանգնեցվում էր հորի վրա, որից և ստացել էր իր իսկական, սկզբնական անունը՝ ճըլկահօր, կամ՝ գավառաբարբառի մեջ գործածված ճըլկավըր, ճլկաֆօր: Այս բառի մեջ մտնող առաջին բաղադրիչ ճըլիկ արմատը՝ ջուլհակ բառի կրճատ ձևը Զանգեզուրում առանձին չի գործածվում: Դազգյահը դրվում է ղարադամի մի ղրաղ՝ անկյուն տեղում, կըլխաճ մի կուճուր ճէրթ կա ճըլկավըրի բուշին՝ գլխին մի փոքր յէրթիկ կա ճըլկահօրի ուղղությամբ: Հորը թույլ էր տա-

[125] Բեխում՝ պէմբակ:

[126] Բեխում՝ վըէճճէրը: